

Յունիս 26, 1980

Ազնուափայլ
Տիկին Լուսի Չօլագեան
Նիւ Եորք.

Սիրելի Տիկին Չօլագեան:

Ենորհակալութեամբ ստացանք ձեր հանգուցեալ ծնողաց՝ Յարութիւն եւ Գոհար Թօփալեանի ի յիշատակ Ս. Վարդան Մայր Տաճարի ըրած լման Պատարագի գեղեցիկ զգեստը:

Տարւոյս Սեպտեմբեր ամսուան ընթացքին Մայր Տաճարի մէջ Ս. Պատարագէն ետք պիտի կատարուի մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն, որուն ընթացքին պիտի յիշենք անունները ձեր հանգուցեալ ծնողաց Յարութիւն եւ Գոհար Թօփալեանի: Հոգեհանգստեան վերջնական թուակամը կանխաւ պիտի տեղեկացուի ձեզի:

Կ'աղօթենք որ Տէրը ձեր ննջեցեալ սիրելիներուն պարգեւէ յաւիտենական հանգիստ եւ խաղաղութիւն իր արքայութեան մէջ: Ձեզի ալ շնորհէ հաստատուն առողջութիւն եւ երկար կեանք, որպէս զի միշտ ձեր ներկայութիւնը վայելենք Մայր Տաճարի շուրջ եւ դուք ալ շարունակէք ձեր նուիրեալ եւ հաւատարիմ ծառայութիւնը Աստուծոյ Տան:

Աղօթարար

Խածակ Վրդ. Պարսամեան
Լուսարարպետ